

ԱԶՐՊԵՅՑԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԵՏԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԾ

Ազրպեյճանի «Ազատիկ» բերքը գրած է, որ Խոյաժական կուսակցութեան ղեկավարն ու անոր քանի մը գործակիցները ձերբակալուած են, «պետութեան դէմ դաւ ճիւղելու» լայնացնելով: Այս ձերբակալութիւնը վերջինը չէ, կ'աւելցնէ բերքը:

Իսլամական կուսակցութիւնը հետապնդում է կ'ենթարկուի, որովհետեւ ան երկրաւարներ կը պրկէ Իրան, մարգումի են բարկելու համար:

Ա. Զ. Բ. Ա. Կ.

— Ծ Ր Ա Թ Ե Ր Թ —

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **آزتاگ جريدة يومية سياسية وأدبية - البنية السؤولة وإشاعة وديشتيان**

1000 L.Ո. 7100- ՏԱՐԻ, ԹԻԻ 74 (19374) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 6 ՅՈՒՆԻՍ 1996 10 ԷՁ

ԻՐԱՔԻ ԴԺՈՒՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՊԻՏԻ ՉԳԱՐՄԱՆՈՒՄ

ՊԱՆՏԱՏ, 5 (ՌԵՕԹԸՐ).- Իրաքի բարձրատիճան պաշտօնատար մը Չորեքշաբթի օր ըսաւ, որ ՄԱԿի հետ ստորագրուած «քարիւղի փոխարէն սնդեղէն» համաձայնագիրը պիտի մեղմացնէ դժուարութիւնները առողջապահական մարպիւն, սակայն պիտի չբաւարարեն բոլոր կարիքները:

Շաւաքի Սապրի Մարքաս, որ առողջապահութեան նախարարութեան պաշտօնատարն է, յայտնեց որ միլիառաւոր տոլարի կարիք կայ վերականգնելու համար երկրին առողջապահական ենթակոնստրուկտները, որոնք գրեթէ փճացան անցեալ վեց տարիներուն:

ՆԵԹԱՆԻԱԶՈՒ ԴԷՄ

ՍՈՒՐԻԱ ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՃԱԿԱՏԻ ԿՈՉ Կ'ԸՆԷ

ԴԱՄԱՍԿՈՍ, 5 (ՌԵՕԹԸՐ).- Սուրիա արաբական միութեան կողմ ուղղեց Չորեքշաբթի օր՝ կարենայ ճակատ մը կազմելու համար Իսրայէլի աջակողմեան կառավարութեան դէմ:

Տեղեկատուութեան նախարարութեան ընդհանուր տնօրէնը մը ըսաւ, որ բոլոր արաբները, ինչպէս նաեւ ՊԱԿ, որուն խաղաղութեան քայլերը Իսրայէլի հետ դատապարտուած էին Սուրիոյ կողմէ, պէտք է մէկըլ զնեն իրենց տարակարծութիւնները եւ միացեալ կեցուածք մը որդեգրեն:

Մահմադ ինայր Ուատի չեչտեց, որ Նեթանիահու որքան ալ որոշէ հրաժարիլ ծայրայեղական քաղաքականութենէ, անոր գորակցող արմատական կուսակցութիւնները պիտի կաշկանդեն գինք: Հետեւաբար, արաբները պէտք է միացեալ ու ամուր ճակատ մը ունենան:

ՍԱՐԴԱՐԱՊՈՍ ԱԿՈՒՄԻՆ ՄԷՁ

Հ. Յ. Դ. Կ. ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՈՒԱԼԻՏ ԺՈՄՊԼԱԹԸ



Մոմալաթ կը խօսի թղթակցներուն (Լուսանկարներ ՃՈՐՃ ՏԵՐԿԻՇԵԱՆԻ)



Հանդիպումից պահուց

Քաղաքականներու հարցերու նախարար Ուալիտ Ժոմալաթ երէկ երեկոյ այցելութիւն մը տուաւ Հ. Յ. Դ. Սարդարապատ ակումբ եւ ընդունուեցաւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչներու կողմէ, որոնց շարքին էր նախարար մէթը Շահի Պարտունեան: Ժոմալաթի կ'ընկերանար Ընկերավարական Յառաջդիմական կուսակցութեան պատասխանատուներէն Աքրաժ Երիւսէյ:

Խորհրդակցութիւնները կեդրոնացան լիբանանեան բեմը յուզող քաղաքական եւ ընկերային հարցերու վրայ: Քննարկուեցան երեսփոխանական ընտրութեանց եւ կենսոլորտի կապուած հարցեր:

Հանդիպումէն ետք, մամուլ յայտարարութեան մը պահուն, Ժոմալաթ վեր առաւ Լիբանանի հայ համայնքի դրական եւ գործօն դերակատարութիւնը՝ լիբանանեան կեանքին մէջ: Իսկ հարցումի մը պատասխանելով, ան ըսաւ, որ իր նախընտրութիւնը կ'երթայ փոքր ընտրաշրջաններով ընտրութիւններ կազմակերպելու քայլին:

ՀԻՒՍԷՅՆ. ՄՈՒՊԸՐԱՔ ԵՒ ԱՐԱՅԱԹ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ

ԻՍՐԱՅԷԼ ՊԵՏԸ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԷ ԱՐԱՔԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԸՈՂԵՐԸ

ԱՔԱՊԱ, 5 (ՌԵՕԹԸՐ).- Յորդանանի Աքապա նաւահանգիստին մէջ գերաստիճան մը գումարող երեք ղեկավարները, Չորեքշաբթի օր կողմ ուղղեցին, որ պէտք է Սիւլին Արեւելքի խաղաղութեան ճիգերը կրկնապատկուին, իրագործելու համար արաբներու հողերու վերադարձը:

Յորդանանի Հիւսէյն թագաւորը, Եզրիպտոսի նախագահ Հիւսէյն Մուպարաք եւ պաղեստինեան իշխանութեան ղեկավար Եսսէր Արաֆատ շեշտը դրին խաղաղութեան ճիգերը շարունակելու անհրաժեշտութեան վրայ: Անոնք աւելցուցին, որ Իսրայէլի կողմէ ստանձնուած բոլոր յանձնարարութիւնները պէտք է յարգուին նոր կառավարութեան կողմէ: Անոնք կ'ակնարկէին Պենիա միւնիսթրիալի ընտրապայքարի՝ ճառերուն, որոնք կը չեղտին, որ Լիւքսեմբուրգի հաւանաբար չգործող ինքնավարութեան ստորագրած բոլոր համաձայնագիրները:

Աքապայի գերաստիճաններ վերստին հաստատեց, որ Իսրայէլ պէտք է վերադարձնէ արաբներուն հողերը: Գերաստիճանը նաեւ գործիք կանգնեցաւ պաղեստինցիներուն իրաւունքներուն:

ՃԵՏՏԱՅԻ ՄԷՁ ԿԵՐԱՍԻՃԱՆ

Սէլուտական Արարիոյ Ֆահտ թագաւորը հաւանաբար Ուերաթ օր (վաղը) Հիւրընկալէ արաբական գերաստիճան մը, որ կը գումարուի Իսրայէլի մէջ Պենիա միւնիսթրիալի ընտրութեան յոյսին տակ: Բարձրաստիճան արարիւնական մը հաւանաբար:

ՉԻԼԷՐ ՊԻՏԻ ՔՈՒԷԱՐԿԷ ԵՐԼՄԱՋԻ ԳԷՄ

ԱՆԳԱՐԱ, 5 (ՌԵՕԹԸՐ).- Թուրքիոյ կառավարութեան գլխաւոր ընկերակից Թանուր Չիլէրի «Ճիշդ Ուղի» կուսակցութիւնը Չորեքշաբթի օր որոշեց վարչապետ Մետուք Երիւսէյի դէմ քուէ արկել խորհրդարանի Շարաթ օրէն նիստին, յայտնեց րարձրաստիճան պաշտօնատար մը:

Իսրայէլի Շարաթ Տետեյէ ըսաւ, որ կուսակցութեան երեսփոխանները զրեթէ միաձայնութեամբ որոշեցին Երիւսէյի դէմ քուէ արկել խաղաղութեան ընտրութեան համար արաբներու առաջարկած լուծումներէն ընտրելու:

կան նկատեց, որ գերաստիճան տեղի ունենայ Ճետտայի մէջ, թէեւ Սէլուտական Արարիա տակաւին պաշտօնապէս չէ յայտարարած, որ պիտի հիւրընկալէ գերաստիճանը, որուն պիտի մասնակցին Ֆահտ թագաւորին կողքին Սուրիոյ եւ Եզրիպտոսի նախագահները: Երեք ղեկավարներուն վերջին հանդիպումը տեղի ունեցած էր Դեկտեմբեր 1994ին, Աղեքսանդրիոյ մէջ:

Սէլուտական Արարիոյ գերաստիճանին նախապատրաստութեան համար շարաթսկիգրին երկօրեայ ժողովներ գումարած էին երեք երկիրներուն արտաքին գործոց նախարարները:

ՆԵԹԱՆԻԱԶՈՒ ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅԻ ԿԸ ՅԱՐԻ

ԹԵՂԱՒԻԻ, 5 (ՌԵՕԹԸՐ).- Իսրայէլի նորընտիր վարչապետ Պենիա միւնիսթրիալի խոստացած է ազատ շուկայի տնտեսութեան որդեգրել, ապահովել կայունութիւնը եւ նուազեցնել սղանքը:

Տնտեսագէտներ կ'ըսեն, որ Նեթանիահու համոզուած է ազատ շուկայի գումարութեամբ, ինչպէս նաեւ կը հաւատայ, որ կառավարութիւնը պէտք է միջամտիլ ըլլալ տնտեսութեան: Անոնք կ'աւելցնեն, սակայն, որ իրականացնելու համար իր ծրագիրները, Նեթանիահու պէտք ունի երեւոյթի լաւ նախարարի մը, ինչպէս նաեւ անհրաժեշտ է, որ Սիւլին Արեւելքի խաղաղութեան գործընթացը շարունակուի:

Նեթանիահուի ընտրութեան յաջողող քանի մը օրերուն թէլ Աւիւր սակարանը նահանջ արձանագրեց, սակայն անիկա վերադառաւ իր կայունութիւնը, երբ վարչապետը յայտարարեց, որ գործիք պիտի կանգնի խաղաղութեան գործընթացին շարունակութեան:

Լիւքսեմբուրգի խոստանալ սեփական մարդ փոխանցել կառավարական 50 ընկերութիւններ՝ յառաջիկայ չորս տարիներուն: Անիկա կը խոստանալ նաեւ նուազեցնել տուրքերը եւ ներդրումները կատարել եմթակոտային, իսկ ծրագիրներու գործողութեան համար:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԶՕՐԱՎԻԳ՝ ՊԱՀՐԵՅՆԻ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ, 4 (ՌԵՕԹԸՐ).- Միացեալ Նահանգները Երեքշաբթի օր գորակցութիւն յայտնեցին Պահլէյնի՝ ըսելով, որ լորթութեամբ կը հետեւին Իրանի դէմ անոր ուղղած ամբաստանութեան:

Պահլէյն յայտարարած էր, որ Իրան կը հովանաւորէ խռովութիւնները՝ տապալելու համար իշխանութեան կառավարութիւնը: Իրան անընդունելի կը նկատէ այս ամբաստանութիւնը:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանքեր կ'ընեն Տէյլիս ըսաւ, որ Ուաշինկթոնի համար նորութիւն չէ Իրանի մեղսակցութիւնը շրջանի ահաբեկչական գործունէութեան:

ՕՐԵՆՔԻՆ ԱՆԿԱՏԱՐ ԸԼԼԱԼԸ ՆՇԵԼՈՎ

Հ. Յ. Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԺՈՂՈՎԸ՝ 28 ՅՈՒՆԻՍԻՆ


Կ'ԸՆԷ ԸՆԿ. Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Հ. Յ. Դ. Հայաստանի Պատասխանատու Մարմինի անդամ ընկ. Լեւոն Մկրտչեան 3 Յունիսին յայտարարած է, որ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն ժողովը տեղի պիտի ունենայ 28 Յունիսին եւ այդ նպատակով, այժմ նախապատրաստական աշխատանք կատարուի, միաժամանակ կը նախագծուի կուսակցութեան յառաջիկայ քայլերուն ուղղութիւնը:

Մանթի Հ. որ Հայաստանի արդարադատութեան նախարարութիւնը անցեալ շաբաթ յայտարարեց, թէ Հայաստանի մէջ Դաշնակցութիւնը կը մնայ արգիլուած կուսակցութիւն եւ անոր ժողովները արգիլուի կը նկատուին: Այս որոշումը տրուած էր, հակառակ անոր, որ դաշնակցական միակ երեսփոխանը՝ ընկ. Ռուբէն Յակոբեան իշխանութեան հարցում ուղղած էր թէ արդեօք ինչ միջոց կ'առաջարկէ, ղոյսը գալու համար բանադրանքի այս վիճակէն:

Ընկ. Լ. Մկրտչեան վերոյիշեալ հաստատումը կատարած է մամուլի ասուլիսի մը աւերով: Ան յայտնած է, որ Հ. Յ. Դ. Հայաստանի կազմակերպութիւնը ժառանգորդն է Հայ ժողովուրդի գինեալ ազգային ազատագրական պայքարին եւ Հայ ժողովուրդին կը ներկայանայ աւանդական ու անփոփոխ արժեքներով, որոնք են ազգն ու հայրենիքը: Դաշնակցութիւնը քաղաքական արժեք կը հրահանէ անկախ պետականութիւնը, որուն համագործակցութիւնը ազգին ազգին ֆիզիքական գոյութեան խնդիրը:

Խօսելով Հ. Յ. Դ. քաղաքական սկզբունքներուն եւ յեղափոխականութեան խնդիրին, ընկ. Լ. Մկրտչեան անդրադարձաւ Հ. Հայաստանի դիմագրաւած ռազմագիտական հարցերուն. ան նշած է, որ Հայաստան թիկունք չունի, անոր հողերուն մէջ մարտը շարունակուած:



KEFRAYA

«Un terroir, une vigne, un vin».

Split System Aircondition

liberty

MADE IN USA

850 \$ With Credit

Heat pump (reverse - Cycle system.) LCD wireless remote control.

Air flow control by the remote control. 24 HR on/off dual setting timer.

Special for hot area.

Sole Agent **aircoPLUS**

Marash street, Said Orra building

Tel.: 01.264865 – 268160 Cel.: 03753340 Fax: 01.263344

ՄԻՏԼԵՆՏ ԱՐՄԻՆԻԱ ԳՐԱՄԱՏՈՒՆ (MIDLAND ARMENIA BANK)

Որ Մերձաւոր Արեւելքի Բրիտանական Դրամատան (British Bank Of M. E.) քոյր դրամատունն է, իր գրասենեակը բացած է Զայաստանի մէջ, Երեւան, Զանապետութեան Զրապարակի վրայ գտնուող «Արմինիա» պանդոկին մօտ:

Միտլենտ Արմինիա Դրամատունը միջազգային առաջին դրամատունն է, որ 1996ի Մարտին ի վեր գործունէութիւն ունի Երեւանի մէջ:

Դրամատունը յաճախորդներուն կը մատուցէ դրամատնային բոլոր ծառայութիւնները. ինչպէս ֆիզիքական, նոյնպէս ալ իրաւաբանական անձերու համար: Այդ ծիրին մէջ ընթացիկ հաշիւներու բացումն ու վարումը, գումարներու փոխանցումը, դրամներու փոխանցումը:

Միտլենտ Արմինիան առաջին դրամատունն է, որ Գանձումի Ինքնագործ Մեքենայով (A. T. M.) գործառնութեան ծառայութիւններ կ'առաջարկէ եւ Զանապետութեան մէջ ճանաչուած է իբրեւ անձնաւոր արդի արհեստագիտութիւնը կիրարկող դրամատուն:

Միտլենտ Արմինիան Մերձաւոր Արեւելքի Բրիտանական Դրամատան քոյր-դրամատունն է: Դուք կրնաք նոյն դրամատան ծառայութիւններն օգտուելու վստահութիւնն ու առաւելութիւններն ունենալ ինչպէս Լիբանանի, նոյնպէս ալ Զայաստանի մէջ: Զաշիւներու բացման եւ գումարներու փոխանցման յանձնարարագիրի ձեւերը կրնաք ձեռք բերել BRITISH BANK OF M.E. ի մասնաճիւղերուն մէջ:

Յաւելեալ տեղեկութեանց համար կարելի է դիմել BRITISH BANK OF M.E. ի մասնաճիւղերուն կամ ՊՐՆ. ԱՆԳՐԱՆԻԿ ՏԵՄԻՐԵԱՆԻ (գործադիր տնօրէն) հեռաձայնի հետեւեալ թիւերով.

Գրասենեակ (01) 341091, (01) 340490, (01) 353484: Բնակարան (03) 616207:

ՀԼԻՆԹՐԱԿԵՆ ՆԱՍՏԱԿ՝ ՀՐԱՌՈՒԻ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՅԱՆՁՆԱԳՈՒՄ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԱՆՔԻՆ

Պէյրուքի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչըրտ ձոնգ Երեկ այցելեց Պապական Եկեղեցւոյ Գլխաւոր Սրբապետին հետ խօսակցելու համար։

Հաղորդեցաւ, որ նամակին բովանդակութիւնը կը վերաբերի Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին՝ շրջանային նոր զարգացումներու լուսին տակ։ Իր գրաւոր պատգամին մէջ, Քլիքըն անդրադարձաւ կը համարէ, որ խաղաղութեան գործընթացը շարունակուի՝ իբրեւ լուծման միակ միջոցը՝ շրջանային բոլոր տաղանդներուն։ Ան նաեւ կը շեշտէ, որ Միացեալ Նահանգներու լանճառու կը մնան խաղաղութեան բանակցութիւններու գլխաւոր նախադրեալը։

ձոնգ յայտարարեց, որ ամերիկեան կառավարութիւնը ամէն ճիշդ պիտի բաժնի, շարժման մէջ դնելու համար խաղաղութեան գործընթացը։ Ան դիտել տուաւ, սակայն, որ բանակցութիւններու վերականգնման համար, պէտք է սուպսէլ Իսրայէլի նոր կառավարութեան կազմութեան։ Ամերիկացի դեսպանը գոհունակութիւն արտայայտեց, որ Իսրայէլի նոր վարչապետ Պեօրաիմ Նեթանիաու լանճառու կը մնայ խաղաղութեան գործընթացին։

ձոնգ այնուհետեւ Պապական ուղղութեամբ վարչապետարան եւ տեսակցութիւն ունեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ։

ԱՅՇԻԷՒ ՍՕՏ «Յ. Լ. ԲԱՆԱԿ»ԷՆ
2 ՍՊԱՆԵԱԼ՝ ՌՈՒՄԲԻ ՍԸ ՊԱՅԹՈՒՄԷՆ

«Հարաւային Լիբանանի Բանակ»ը երէկ տուաւ 2 սպանեալ եւ 2 վիրաւոր, երբ Այլիշի ճամբուն վրայ ուսմը մը պայթեցաւ «Հ. Լ. Բանակ»ի մէկ ջոկատին անցքին պահուն։

«Հրացայտ» Պէյրուքի յայտարարեց, որ ինք կը կանգնի գործողութեան ետին։

Միւս կողմէ, իսրայէլեան ցինուորական ջոկատ մը ներխուժեց Մերժաւունի շրջանի գիւղերէն մէկը եւ յայնաժիր խուզարկութիւններու ձեռնարկեց։

Հարաւի ապահովութեան աղբիւրներ հաղորդեցին, որ իսրայէլացիք Մերժաւունի մէջ Քլեբըրս սպաննուեցան իսրայէլացի խոտանուեցած են ապահով-

ութեան միջոցառումներէն եւ յաճախակիորէն կը դիմեն խուզարկութիւններուն։ Նոյն աղբիւրները անցյուցին, որ գրաւող ուժերը այն մտաւախութիւնը ունին, որ Մերժաւունի մէջ կը գործեն դիմադրութեան գործակից զօրաւոր ցանցեր, որոնք մասնակից կը դառնան հակաիսրայէլեան գործողութիւններու կազմակերպումին։ Իսրայէլացիներու մտահոգութիւնը խորացաւ յատկապէս դիմադրութեան վերջին գործողութեան պատճառով, երբ Մերժաւունի կեդրոնական պողոտային վրայ կրկնակ ուժիւհարու մի մը հետեւանքով սպաննուեցան իսրայէլացի խոտանուեցած են ապահով-

ԿԵՆՍՈՒՈՐՏԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ ԽՈՐՀԱՍՏՈՂՈՎ

Կենսոյոտի պաշտպան միջազգային օրուան առիթով, իրանանեան Համալսարանին մէջ երէկ տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութիւն մը, բազմաթիւ նախարարներու, երեսփոխաններու եւ ակադեմիական անձնաւորութիւններու մասնակցութեամբ։ Հանդիսութիւնը նախաձեռնութիւնն էր կենսոյոտի հարցերու նախարար Փիեռ Ֆարառիի։

Խօսք առին առողջապահութեան նախարար Մարուան Համատէի ներկայացուցիչը, վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդի նախագահ Նեպիլ ժուր, Լիբանանեան Համալսարանի նախագահ Ասատ Տիապ, Լիբանանի մէջ ՄԱԿի ներկայացուցիչ Ռոս Մաուրիսի, երեսփոխաններ Սամիր Աուել եւ մեթը Յակոբ Չուխաւտիան, տեղեկատուութեան եւ կրթական նախարարներ Ֆարիտ Մաքարի եւ Ռուպիլ Ղանիւ։ Անոնք շեշտեցին կենսոյոտի պահպանութեան եւ այդ նպատակով գործընկերակցութեան կարեւորութիւնը։ Փակման խօսքը կատարեց նախարար Փիեռ Ֆարառի, որ ներկայացուց նախարարութեան յաւաքիկայ ծրագիրները՝ կենսոյոտի պահպանման նպատակով։

ՍԻՏԱՆՎ ՎԱՐԱԿՈՒԱՍՆԵՐՈՒ
ԹԻԻԸ ԲԱՐԴԱՐՅԱՆ Է

Առողջապահութեան նախարար Մարուան Համատէ յայտարարեց, որ այս տարուան ընթացքին, ՍԻՏԱՆՎ վարակուած հիւանդներու թիւը աւելցած է 25-ով։ Համատէ ըսաւ, որ ներկայիս Լիբանանի մէջ արձանագրուած են ՍԻՏԱՆՎ վարակուած 400 հոգի, որոնց 20 առ հարիւր կիներ են։ Վարակուածներու շարքին են 25 մանուկներ, 35 օտարներ եւ 13 բանտարկեալներ։ Անցեալ տարուան վերջերուն, ՍԻՏԱՆՎ վարակուածներուն թիւը կը գնահատուէր 375-ով։ Մասնագէտներու կարծիքով, այս թիւերը շատ հեռու են իրականութենէն, որովհետեւ ՍԻՏԱՆՎ վարակուած բազմաթիւ հիւանդներ կը խուսափին ներկայանալ հիւանդանոցներ եւ հետեւաբար այդ պարագայները դուրս կը մնան պաշտօնական տեղեկագիրներէն։

ԶՆԱՍՏԱՆ ՀԵՏԱԲԵՐՈՒՄԸ Է
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԵՏ ԱՌԵՏՈՒՐՈՎ

Չինեւարարական առեւտուրի գրասենեակի պատւիրակութիւնը երէկ այցելութիւններ տուաւ նախագահ Իլիաս Հրրաուի, խորհրդարանի նախագահ Նեպիլ Պրորիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի։ Պատուիրակութեան պետը յայտարարեց, որ Չինաստան չհագրողութեան է Լիբանանի հետ առեւտրական գործակցութեանը եւ այս գծով տրամադրի է կնքելու շարք մը համաձայնագիրներ։ Ան յայտ յայտնեց, որ վարչապետ Ռաֆիք Հարիրիի Փեքին այցելութիւնը աշխուժացնէ երկու երկիրներու տնտեսական գործակցութիւնը։

ԸՆՏՐԱԿԱՆ ԱՐԴԱՐ ՕՐԵՆՔԻ
ՍԸ ԲԻՒՐԵՂԱՅՈՒՄԸ՝
ԿԵՆՍԱԿԱՆ

Ընտրական օրէնքին շուրջ քննարկութիւնը կը թուի հեռու ըլլալ փարատելէ։

Խորհրդարանի նախագահ Նեպիլ Պրորիի այցելած երեսփոխանները հաւորդեցին, որ խորհրդակցութիւնները կը շարունակուին, սակայն յստակ նախատեսութիւններ կարելի չէ ընել։

Անոնք անգամ մը եւս չեշտեցին որ Պրորիի համոզմամբ, ընտրութիւններ տեղի պիտի ունենան օրէնքով ճշգրտած ժամկէտին։

Պրորիի ըսած է, որ խորհրդարանը նախապիտի չգումարէ, եթէ կառավարութիւնը խորհրդարանին չներկայացնէ ընտրական օրէնքի նախագիծը։ Ան չեշ-

տած է, որ ընտրական օրէնքի հարցը կրնայ վճռուիլ միայն խորհրդարանին մէջ։ Ան աւելցուցած է, որ երեսփոխաններու քուէարկութեան ճամբով միայն կարելի պիտի ըլլայ որոշել, թէ ընտրութիւնները գաւառներու թէ նահանգային հիմամբ տեղի պիտի ունենան։

ՆԱԽԵՒ ՀԱՄԻՐԻ

Երեսփոխանական ընտրութիւններու անխուսափելիութիւնը չեշտեց նաեւ վարչապետ Ռաֆիք Հարիրի։

Հարիրիի հետ հանդիպումէ մը ետք, երեսփոխան Սամիր խաթաբարեց, որ վարչապետը ընտրութիւնները կը համարէ վճռական՝ Լիբանանի ժողովրդավարական համակարգին համար։ Հարիրի անհրաժեշտ համարած է, որ ընտրութիւններուն մասնակցին առաւել լազույն թիւով լիբանանցիներ։ Ան ըսած է, որ պէտք է որդեգրուի ընտրական այնպիսի օրէնք մը, որ կանխարգիլէ ընտրութիւններու դէմ պնդութիւն լիբանանեան այս կամ այն հոսանքին կողմէ։

Ընտրութիւններու հարցը խորհրդակցութեան նիւթ եղաւ Հարիրիի եւ մա-

րոնիներու Ս. Մարիամ միաբանութեան պետ Սաադ Նըմրի միջեւ հանդիպումին։ Նըմրը յայտարարեց, որ ընտրութիւններու նախարարին՝ պէտք է արագացնել Լեռնայի շրջանի գաղթականներուն տունդարձը, որովհետեւ ատկաւ համայնքներու միջեւ խաղաղ գոյակցութեան հիմնական գործօններէն մէկն է։ Ան աւելցուց, որ այդ քայլը պիտի նպաստէ նաեւ, որ ընտրութիւնները կայանան արդարութեան հիմք վրայ։

Վերահաստատելով պատրիարք Սէյրի կեցւածքը, Նըմրը պահանջեց, որ ընտրութիւնները կայանան նոյն հափանիչներով՝ Լիբանանի ամբողջ տարածքին։

Մարոնիներու պատրիարք կարտինայ Սէյրի պահանջեց, որ ընտրական օրէնքին մէջ հաստատուին միատեսակ հափանիչներ՝ ըրոր ընտրաշրջաններուն համար։

Սէյրի ըսաւ, որ առարկութիւն չունի, եթէ իշխանութիւնները ընտրաշրջանները պիտի ներարկեն նոր բաժանումներու։ Ան շեշտեց սակայն, որ այդ բաժանումները պէտք է ընդգրկեն բոլոր նահանգները առանց բացառութեան։


ԿԱՌԱՏՈՒՆԵՐ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ
ՊԱՐՏԵԶՆԵՐ ՊԵՅՐՈՒԹԻ
ՀԱՄԱՐ

Պէյրուքի նահանգապետ Նիքոլա Սապա վստահեցուց,

որ մայրաքաղաքի վիճակը կ'երթայ դէպի բարեկալութեամբ եւ «Արեւելքի մարգարիտը» պիտի վերագտնէ իր դերակատարութիւնը շրջանին մէջ՝ Ձեռք դարձնելով սեմին։

Սապա յայտնեց, որ երկու ամիս ետք, Պէյրուքի բոլոր փողոցները լուսաւորուած պիտի ըլլան, ինչպէս նաեւ պիտի կանաչապատուին մեծ տարածքներ։ Ան ըսաւ, որ խնդրումի հարցը լուծելու համար, շինարարութեան արտօնագիր պիտի չտրուի այն կառույցներուն, որոնք քարտէսներուն վրայ յստակօրէն չ'երեւիր կառուածներուն յատկացուած տարածքը։ Սապա ըսաւ, որ նահանգապետարանի ջանքերով, 500 կոտոր կայուած վերածուած է կառուածան, իսկ ներկայիս կը քննարկուի հանրային պարտէզներու տակ կառուածներ կառուելու հարաւորութիւնը։

Հ. Յ. Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ...



են դրացի 2 երկիրներու կողմէ եւ այս պայմաններուն մէջ, իւրաքանչիւր հայ գինուոր կը նկատուի։ Ան նաեւ նկատուի տուած է որ շահատուան ընկալման դաշնակիցներն են Իրանը, Ռուսիան եւ հակաթուրք կողմնորոշումով երկիրները։

Խօսելով յաւաքիկայ ժողովին մասին, ընկ. Լ. Մկրտչեան յայտնած է, որ Գերագոյն ժողովին պիտի ներկայացուի Հայաստանի կազմին կանոնագիրի նախագիծը, հիմնուած՝ 1991ի կանոնագիրին վրայ, որ պատրաստուած էր Հայաստանի սահմաններէն ներս գործելու համար։ Ան բացատրած է, որ ըստ նախագիծին, հանրապետական ժողովն ու հանրապետական կոմիտէն պիտի հրահանգեն Հայաստանի մէջ Գերագոյն Մարմինները, պիտի յաւաքագրուին շրջանային կառույցներ, պիտի ստեղծուին խմբային աշխատանք եւ ակմարային դրութիւն։ Ընկ. Լ. Մկրտչեան նշած է, որ ժողովի հրահանգը ուղղուած է հակառակ նախարարութեան

ԶԱԿԻՆ
ԿՈՐԻՒՍԻՆ
ՊԱՏԱՌՈՎ

17ամեայ իրանանցի մը երեքշաբթի օր գոհ գնաց ինքնաշարժի արկածի մը, իսկ երէկ գտնուեցաւ անոր հօր դիակը։ Հայրը անձնասպան եղած է։

Դէպքը պատահեցաւ ժողովին շրջանին մէջ։ Զակին արկածին րօթը ստանալով, հայրը հեռացած է ընկալարանէն, բայց գիշերը վերադառնալով՝ միջտասպան դեղ խմելով թունաւորած է ինքզինքը։ Դէպքին վայրը հասնող թիւիչները չկրցան փրկել տառապանքին գոհ պացած հօր կեանքը։

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

•ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹԵԱՆ նախարարութեան աղբիւրներու համաձայն, Լիպերիայէն Լիբանան տեղափոխուած մօտ 20 իրանանցիներ վարակուած են մայրիխոյով... Հիւանդները ներկայիս կը խնամուին հիւսիսի Ռահպի գիւղին մէջ։

•ՅՈՒՆԻՍ 20ին, Նահատակաց Հրապարակին վրայ բացումը պիտի կատարուի «Լիբանան 96» տօնավաճառին, որուն կը մասնակցին 27 երկիրներ ներկայացնող շինարարական աւելի քան 300 ընկերութիւններ։ Տօնավաճառին բացումը պիտի կատարէ վարչապետ Ռաֆիք Հարիրի։

•ԹՐԻՓՈԼԻԻ գտարանի աշխատաւորները երէկ դիմեցին գործադուլի, բողոքելու համար ամսականներու 50 առ հարիւր նուազումին դէմ։

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՄԱՍԻՆ
ԱՅԼԱԶԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Քաղաքական բեմը կ'ապրի շուրաւ վիճակ մը, ինչ կը վերաբերի երեսփոխանական ընտրութիւններու հարցին։ Գոյութիւն ունին բազմաթիւ կարծիքներ եւ անհարիւրներ, որոնք վիճակը կը նմանցնեն «ընտրութիւններու բարեկարգ», տրուած ըլլալով, որ իւրաքանչիւր կողմ կը տարածէ իրեն յարմարող տեղեկութիւնները։ Լիբանանեան - սուրիական գերաստիճանէն ետք, րաւեցաւ, որ համաձայնութիւն գոյացած է ընտրութիւններու եւ ընտրական օրէնքի հարցերուն շուրջ, իսկ իշխանութեան պետներուն այցելող հիւրերը տարրեր եւ հակասական տեղեկութիւններ կը փոխանցեն հարցին մասին, այնքան մը, որ ընտրական կացութիւնը ներկայ հանգրուանին «մոխրագոյն» է։

Նախագահ Իլիաս Հրրաուիի այցելուները կը յայտնեն, որ ան համաձայն է արդար եւ բոլորին միջեւ հաւասարութիւն ստեղծող օրէնքի մը, միւնչդեռ ուրիշներ կը յայտնեն, որ ան տակաւին կը դանդաղի իր կարծիքը արտայայտելու, որովհետեւ կացութիւնը շատ նուրբ է, չարակապէս Լեռնայի շրջանին մէջ եւ ան չ'ուզեր գալուանք նախարար Ուալիտ Ժամպալթուն Սէյրի պատրիարքի, ինչպէս նաեւ չ'ուզեր նեղ կացութեան մաստնել իր փեսան՝ արտաքին գործոց նախարար Ֆարիք Պուէյզը, որ համաձայն է նահանգային դրութեան։ Ան լաւ գիտէ զաւառը իրեն ընտրաշրջան որդեգրելու պտանգները, ուրեմն, ինչպէս որ Ժամպալթուն իր մտաւախութիւնները, Պուէյզը նոյնպէս ունի այլ մտաւախութիւններ։

Երեսփոխանական աղբիւրի մը համաձայն, ընտրութիւններուն մոխրագոյն պատկերին պատճառը այն որ նախագահ Հրրաուի կ'ուզէ երկար ժամանակ խորհրդակցութիւններ կատարել։ Եթէ ան յաջողի ոչնչացնել Լեռնայի շրջանը նահանգ որդեգրելու դիմաց կանգնած դժուարութիւնները, այդ պարագային, իրագործած պիտի ըլլայ Սէյրի պատրիարքին իր սուրած խոստումը, ապա թէ ոչ, գաւառը պիտի որդեգրուի, որովհետեւ Սուրիա չ'ուզեր, որ իր դաշնակիցները կուսնցնեն իրենց դիրքերը։

Հետեւաբար, աղբիւրը կը կարծէ, որ ընտրական օրէնքի որդեգրումը պիտի ուշանայ։ Անկիւն վերջնական ձեւով կրնայ չ'հրապարակուիլ այս ամսուան վերջաւորութեան առաջ, կրնայ նոյնիսկ երկարիլ մինչեւ Յուլիսի սկիզբը, երբ արդէն իսկ շրջանային պատրիարք աւելի յստակացած է ըլլալով։ Սուրիա ժամանակ տրամադրուած է իրանանեան թղթածրար քննարկելու։ Ան չ'ուզեր խանգարել ներքին բեմը, որովհետեւ ան մօտէն կը հետեւի Իսրայէլի նոր վարչապետին շարժումներուն եւ կազմութեան նոր կառավարութեան։

Իսկ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հիւրերը անոր այցելութենէն ետք դուրս եկած են տարբեր տպաւորութիւններով, սակայն ոչ մէկը գործնական է, այլ կ'ըսեն, թէ պէտք է սպասել։ Սակայն բոլոր այցելուները կը յայտնեն, որ ընտրութիւնները պիտի կատարուին եւ Լեռնայի շրջանին հարցը 70 առ հարիւր տոկոսով լուծուած է։ Իսկ սուրիացիք նախագահ Հրրաուիին տուած են յարմար լուծումը գտնելու նշանը։ Ան պարզապէս ժամանակ կը պահանջէ այս հարցին համար, մինչեւ, որ Պեքըքէի հետ խորհրդակցութիւնները աւարտին։

Պրորիին այցելուները նաեւ կը յայտնեն, որ ընտրութիւնները իրենց ճշդ ուսած ժամանակին պիտի կատարուին, սակայն տակաւին չ'է վճռուած Լեռնայի շրջանին հարցը։


Երեսփոխանական աղբիւրները կը յայտնեն, որ Պրորի կը հաստատէ, թէ ինք կը յարգէ խորհրդարանին կամքը եւ կը յուսայ, որ միացեալ օրէնքի շուրջ համաձայնութիւն գոյացնէ։

«ԵՒՐԱ»ԷՆ

ՈՒՊԵՐ ԱՄԻՐԱՆԵԱՆ
ԱՅՅԵԼԵՑ «ԱՉԳԱԿ»Ի
ԽԱՐԱԳՐԱՏՈՒՆ

Երէկ կէսօրին, «Ազգակ»ի խմբագրատունը այցելեց հայրենի տաղանդաւոր երգչուհի Ռուպի Ամիրխանեան, որ Հայաստանի Համալսարանէն լիբանանցի շրջանաւարտներու միութեան հրաւերով Լիբանան եկած է երգահանգէսի մը առիթով։

Ռ. Ամիրխանեան առաջին անգամ Լիբանան այցելած է շուրջ 25 տարի առաջ, 70ականներու սկիզբը Այժմ, արդէն իսկ աւելի քան հազար երգերու եւ երաժշտական յօրինումներու հեղինակ է հայրենի արտատաղէտը կը պատկանի այն սերունդին, որ հայ երգչ-ժողովրդային հայ երգը զարգացուցած է համապատասխան նոր ժամանակներու ոգիին, առանց սակայն հեռանալու հայ երաժշտութեան ոգիէն։ Եւ այդ պատճառով ալ, ան կը նկատուի, բնականաբար, ամէնէն սիրուած եւ ժողովրդային երգահանգներէն մէկը, որ անհատական գրոյցի պահուն այնքան հաղորդակաւ է, որքան բեմի վրայ։



Ինչպէս որ անհատի մաքրութիւնը անհրաժեշտ է, այդպէս ալ անհրաժեշտ է հաւաքական մաքրութիւնը։ Իւրաքանչիւր քաղաքացի պարտի օժանդակել քաղաքին մաքրութեան, որպէսզի առողջ մըր-նոյնը պիտի մէջ ապրին։ Այս տարի համաշխարհային առողջապահական պատգամը պատգամ է «Առողջապահական քաղաքներ աւելի լաւ կեանքի համար»։ Անհատի անմաքրութիւնը, աղբերու կուտակումը, անախորժ բարձր ծախսերը, օդի եւ կենսոլորտի աղակալումը վատ ազդեցութիւն կ'ունենան անձի մը առողջութեան վրայ։ Հետեւաբար մասնակցեցէք հաւաքական գործունեութեանը, բնականաբար քաղաքը քու տունդը վերածելու համար։

Լ. Օ. Խ. Լ. ՊՈՒԼ ԶՈՐԻՃԵԱՆ
ԸՆԿԵՐԱՆ - ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Ս. ՎՐԱՑԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻԻԴ

ԽԱԶԲՈՒՌ ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ

Մայիս ամիսը նուիր-
ւած ըլլալով մայրերուն յի-
րանանահայ րազմաթիւ
միութիւններ, կազմակեր-
պութիւններ, մասնաւորա-
բար՝ եկեղեցասէր, դպրո-
ցասէր եւ հայրենակցական
տիկնանց միութիւններ եւ
10 հիւ մասնաճիւղեր կազ-
մակերպեցին «Մայրերու
Օր»ուան նուիրուած հան-
դիսութիւններ, իւրաքան-
չիւրը իր ոճով, հրապարա-
կային սրահներէն մինչեւ
ճեղքերէն՝ սրահներ, մինչեւ
խկ կազմակերպելով դաշ-
տապնացութիւններ:

Այս հանդիսութիւննե-
րու երկար շարքին վերջի-
նը եղաւ Համագայինի
Պետր Համուտի մասնա-
ճիւղին գրական-գեղար-
ւեստական յանձնախում-
բին կազմակերպած «Մայ-
րերու Օր»ը, որ տեղի ու-
նեցաւ Հինգշաբթի, 30 Մա-
յիս 1996 թ. երեկոյեան, «Յ.
Տէր Մեղրեան» հանգի-
սարահին մէջ:

Հանդիսութեան տըր-
ւած էր «Խաչքուտ Հայ
Մայրերու» գործը, որով
ի յայտ կու գար մեծարա-
նքի յատուկ շնոր մը: Ար-
դարեւ, հայ գրականութե-
ան ընդմէջէն մայրերը
լարեցին նպատակ կը հե-
տապնդէր ձեռնարկը:

Յայտագիրը ընթացաւ
հայ գրական կնքին քաղ-
ած ընթերցանութեամբ
(մատուցում), բանաստեղ-
ծութիւն թէ արձակ, երա-
ժշտութեան ընկերակցու-
թեամբ: Ընթերցումներու
կատարեցին Անահիտ
Սուքիասեան, Սեդա Գրի-
գորեան եւ Սոնիա Քիլիճ-
եան:

Հայ գրականութիւնը
հարուստ է մայրերուն
նուիրուած ծանօտ յի-
շուհի:

ՄԵՐ ԱՌՕՐԵԱՅԵՆ

ԽՄԲԵՐԳ ՄԸ ՏԱՍԸ ԵՐԳԻԶՆԵՐՈՎ

Հիրանանահայ տասը ժողովրդային
երգիչներու կատարողութեամբ հրապարակի վրայ է երգի մը ձայները: «Ող-
ջոյն Քեզ, Հայաստան» թեմայով:

Այս առիթը օգտագործելով՝ նախ
ընենք ուրախալի երեւոյթ է յիրանանա-
հայ երգիչներու խմբական - հաւաքա-
կան այս տրամադրութիւնը՝ քով քովի
գալով երգ մը ներկայացնելու հանրու-
թեան: Երկրորդ՝ հայրենասիրական նիւթ
մըն է թեման, ինչ որ ջերմութիւն կը
փոխանցէ երիտասարդ թէ հասուն տա-
րիքի հայ մարդուն, գանձեր մտնելով առա-
ւել հետեւողական ձեւով արժարժելու
հայրենասիրական պարունակներով յազե-
ցած արտայայտութիւններ: Այս ձեւով
քիչ մը «շունչ կ'առնեն» համըրդները,
չըթուքները եւ շատ սովորական, կրթի-
նութիւններով իսկ ձանձրոյթ պատճա-
ռող երգերը:

Երգը ունի բաւերը գրող մը, եղանա-
կը յորինող մը, դաշնաւորող մը, ու վեր-
ջապէս՝ տասը երգիչներ: Այսինքնական
կարգով տանք անունները երգիչներուն:
Արարատ Ահարոնեան, Անթուան
Պեգեան, Ժաք Օթեան, Ժոզէֆ Գրի-
գորեան, Կարո Կապուտական, Մանուկ
Մինասեան, Յովիկ Քիւզլեկեան, Շաքի
Պաղտասարեան, Պերճ Նազարեան, Վի-
գէն Տիչեքեան:

Խօսք՝ Վաչէ Պոպոյեան, երաժշտական
յորինում՝ Բաֆֆի Զաքարեան, դաշնա-
ւորում եւ ընկերակցութիւն՝ Զարեհ Քի-
չիեան:

Իւրաքանչիւր երգիչ ունի մէկ կամ
երկու տողնոց կատարում: Երբ մայր
նասիրուեցաւ եւ պատկերասփուռեցաւ
յիրանանահայ ռատիոկայաններէն եւ

հայկական էջ.Թի.էն. պատկերասփու-
ռէն:

Ունենդորելով հաւաքական այս աշխա-
տանքը, հաստատեցինք առաջին անգամ
ըլլալով մամուլին մէջ մեր կատարած
պարբերական դիտողութիւնները՝ «Թր-
քարալոյ երգեր»ու հասցէին: Ուրախ ենք,
որ գլխ անդրադարձած են մեր երգիչնե-
րը, թէ հարկ էր ձեռնով մը փորձել այս
երեւոյթը կամ ինքնահաստատումի փորձ
մը կատարելով ապացուցանել, թէ երի-
տասարդ երգիչը ընելիք ունի եւ հարկ է
մշակելով՝ ակունք տալով սրտեցաւ քննա-
դատութիւններու, դիտողութիւններու,
որոնք կը կատարուին յոգուն Հայ երգի
մաքուր պահպանման, հայ մշակոյթին
անաղարտ՝ նոր սերունդին փոխանցման:

Ի յուր «Ողջոյն Քեզ, Հայաստան»
խմբերգին ընդունելի որակով յոյս ըն-
ծայման, կը ծափահարենք մեր ժողովրդ-
դական երգիչները, անոնց ըսելով. «Սի-
րեյի տղաք, մենք կը սիրենք ձեզ, դուք
արժանի էք քաջայերեանքի միայն թէ մնա-
ցէք հայ երգի, հայ մշակոյթի աւանդու-
թիւններուն ճամբաներուն վրայ, նորու-
թիւններ մտնեցէք, եթէ խորթ ու աւա-
հանջ չեն մեր մշակութային նկարա-
գիրին: Հայութեամբ պէտք է շնչեն մեր
երգերը ու ոչ՝ այլազգի աղմկաբար ձայ-
ներով... Անգիտակից վերաբերումները,
«այսպէս ալ կ'ըլլայ» թոյլ ու դիւրին
միջոցառումներ որդեգրելը կ'այլասե-
րեն հայեցի մեր դիմագիծը»:

Հաճոյքով ունենդորելիք խմբական
երգեցողութիւնը՝ իւրաքանչիւր երգիչ
հոն դրած է իր յուզումը, ապրումը, մեկ-
նաբանական ոճը, ճանային տուեալը,
հայրենասիրական լարի ուսուցիչ թրթու-
թումը... Երգասէր երիտասարդներուն կը
ցնորունքնման երգերու հետամուտ ըլլա-
լու պարտաւորութիւնը:

Իսկ այժմ կը ծափահարենք տասը եր-
գիչները, խօսք, եղանակ եւ դաշնաւո-
րում կատարող երեք երիտասարդները:
13 երաժշտասէր տղոցմով իրականացած
արդիւնք մը, անշուշտ՝ բախտաբեր...
Պէտք է շարունակել աւելի աւելի տես-
լականով:

Յայտագիրը աւարտին
փակման խօսքը ներկայա-
ցուց վարչութեան ատենա-
պետ ընկ. Գալուստ Գրի-
գորեան, որ հրաւիրեց Հա-
մագայինի Շրջանային
Վարչութեան ատենապետ,
ընկ. Սազո Արմէնեանը
յանձնելու յուշանուէրնե-
րը հերոսածին մայրերուն,
որոնց գաւակները նահա-
տակուեցան յանուն Հայ
Դատի արդար լուծման եւ
յանուն Արցախի վերադար-
ձին՝ իր Տիրոջ, Հայու-
թեան: Յուշանուէրները
Համագայինի սկզբնա-
տաւ Հ տառին ոսկեայ
պատճէնէն էր, որով գար-
դարուեցան կուրծքերը
ազգին գաւակ մատաղած
մայրերուն, յուշական թէ
հպարտաւոր միջնորդող մը
ստեղծելով սրահին մէջ:

Հաւ պիտի ըլլար եթէ
յայտարարուէին անուննե-
րը հերոսածին մայրերուն,
անգամ մը եւս բարձրա-
ձայն յիշելու համար մեր
հերոս տղաքը:

Ինքնուրույն ձեռնարկ
մըն էր մատուցուածը՝ Հա-
մագայինի վալսէ մակար-
դակով եւ արժանաւորու-
թեամբ:

Փափաքելի է որ մեր
մշակութային միութիւն-
ները յաճախակի կազմա-
կերպէին այլ առիթներու
նուիրուած հանդիսու-
թիւններ գրական-գեղար-
ւեստական մատուցումնե-
րով, առաւել ցայտուն
դարձնելով օրուան միտքը,
առիթին պատգամը, հա-
ղորդական ուժը:

Թ.Պ.Ա.Կ.Ի.Յ.

Ս. ԽԱՆԱՄԻՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՈՒԼԷՃ

ՄԵԿ ՇԱԲԱԹ՝ ԵՐԵՔ ԶԵՌՆԱՐԿ

Մայիս ամսուան վերջին շաբաթը արտակարգ աշխու-
ժուքի տօրն էր Ազգային Մուրէն Խանամիրեան Քուլե-
ճին մէջ: Թէ՛ ծնողական մակարդակի եւ թէ՛ աշակերտական
մակարդակի վրայ, երբէ՛ ձեռնարկներու նամակ, դպրոց -
ծնող - աշակերտութիւն կապը յաւիտեայ չափով ամրա-
պնդուեցաւ եւ նոր լիցեաւորում ստացաւ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՌՕՍՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, 23 Մայիս 1996 թ., վարժարանի Մանկա-
պարտէզի Տիկնանց Յանձնախումբի կազմակերպութեամբ,
դասախարակական բնոյթի նախաձեռնող իւրաքանչիւր մը տե-
ղի ունեցաւ դպրոցի սրահին մէջ: Իր բնոյթին մէջ երկրորդ
այս ձեռնարկին բանախօսք էր Պէյրուիի Ամերիկեան Հա-
մագայինի դասախօս տիկին Մէլի Արեւիկեան, որ շուրջ
45 վայրկեան տեսողութեամբ նախ խօսեցաւ Հայ Դպրոցի
կարեւորութեան մասին, ապա ներկայացուց «Նախնական
Դարձումը եւ Անմիջական Բուժօգնութիւն» նիւթը: Իս-
տախօսութեան նիւթը ապագայում բաժնուեցաւ ծնողնե-
րուն:

Իստախօսութեան իսկ, ծնողները ուղղեցին հարցում-
ներ՝ իրենց անմիջական շրջապատէն եկող հարցերու շուրջ:
Արեւիկեան մանրամասնօրէն պատասխանեց:

Ներկայից մեր տղային աշխատանքի յատուկ
իրեւելիքներ: Տեղայն վրայ կատարուած քաղաքականութեամբ,
ծնողները պատրաստեցին խնամակցային պիտոյքներ եւ
իրեն յիշատակ տարին իրենց հետ:

ՄԱՅԻՍ 28

Չորեքշաբթի, 29 Մայիսի առաւօտեան, դպրոցի բակին
մէջ, մանկապարտէզէն մինչեւ երկրորդականի աշակերտ-
ներ, ուսուցիչներ եւ ծնողներ հաւաքուած էին տօնակա-
տարելու Հայաստանի Անկախութեան տարեդարձը: Աշա-
կերտներուն կողմէ պատրաստուած թեմին առջեւ, աշա-
կերտական ելոյթներով եւ խօսք առաւ Սուրբ Խանա-




Մշակերտները խանդավառութեամբ կը հետե-
ւին Արցախի ազատամարտիկին երգին:

միրեան Ազգային Քուլեճին շրջանաւորուած, այժմ Բանասու-
լի մէջ հաստատուած ազգային գործիչ Յակոբ Տէր Խաչա-
տուրեան: Դպրոցական իր յուշերուն ընդմէջէն աշակերտ-
ներուն ուղղած իր խօսքին մէջ բանախօսք վեր առաւ 28
Մայիսի խորհուրդը՝ շնորհ ղեկով ազատութեան, անկա-
խութեան եւ միութեան գաղափարներուն վրայ, երաւելի-
յով աշակերտները, որ իրենց կարգին, բարձր պատկեր ազատ
ու անկախ ապրելու հայ մարդուն վնասակարութիւնը:

Օրում անակնկալը Արցախի ազատամարտիկ երգիչ
Մակիչի ելոյթն էր: Ան մէկ ժամ տեսողութեամբ երկխոս-
կանցուց միւրոյցը եւ յայնպէս գոհապնդումի օրինակ
եղաւ վարժարանի աշակերտութեան:

Փակման խօսքը կատարեց վարժարանի տնօրէն Յակոբ



Ազատամարտիկ երգիչ Մակիչ:
նի պետութիւնը ըլ-
լայ ամբողջ հայութեան պետութիւնը:

ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ

Յաջորդ օր, 30 Մայիսին, վարժարանի սրահին մէջ
մանկապարտէզի աշակերտութիւնը տօնեց «Մայրերու Օր»ը,
մեծ քիւնով ծնողներու ներկայութեամբ: Արտասանու-
թեամբ, երգով ու պարով աշակերտները իրենց շնորհա-
կալութեան «խօսք»ը ըսին իրենց ծնողներուն: Բժախոյնը
րութեամբ պատրաստուած ելոյթն էր խօսք առաւ դպրո-
ցին տնօրէնը, որ տօնի տօնի նկատեց «Մայրերու Օր»ը,
որովհետեւ՝ «Մայրը եղած է ու է՝ հիմը Հայ ժողովուրդի



Մայրերու Օրուան տօնակատարութիւն:

գոյատեւման, եւ առանց մօր կարելի չէ երիտակային Մայր
Հայրենիք, Մայր Հայաստան, Մայր Եկեղեցի»:

Ապա ան
տողութեամբ զանազան պատմութիւնով, պարագան-
րութեամբ, հայ մօր արժանապատեան նախաձեռնող, անկա-
միշտ նկատելով, որ հայ մայրը վերադառնալ անցակի
աւանդներուն, գտնուել էր հայ տան, տարածողը հայ
խօսքին, հայրենի գիրքին ու հայոց պատմութեան:

Տեղին է յիշել, որ Յունիս ամսուան ընթացքին վարժա-
րանին մէջ տեղի պիտի ունենայ ձեռնարկ աշխատանքնե-
րու եւ նկարչութեան ցուցահանդէս, ինչպէս նաեւ Խանա-
միրեան Քուլեճի աշակերտական քաղաքի համըրդեան
պիտի ներկայացնէ, Մուշեղ Մուրադեանի քանդակութեամբ,
Դաւարոս Աղայեանի «Անահիտ»ը:

Հանդիսութիւնը փակուեցաւ օրհնութեան աղօթքով:

«ԴՐՈ»Ի ՀԱՐՑ

Ռ. ՍԱՀԱԿԵԱՆ Կ'ԱՊԱՅՈՒՅԷ Հ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆԸ

«Իրօ-ի հարցը քննող Հայաստանի Գերագոյն Դա-
տարանի անցեալ շաբաթավերջի միտինգ, Հրաճ
Մարգարեանի պաշտպան փաստաբանը՝ Իոնքէն Սա-
հակեան, արտասանեց պաշտպանական իր վերջին
ճառը եւ բազմաթիւ փաստերը անդկայացնելով, ցոյց
տուաւ, որ իր պաշտպանեալը անմեղ է ու անոր վե-
րագրուած մեղադրանքները շինծու են:

Առաջին հերթին, ան նկատելի տուաւ, որ մեղադրող
կողմը հիմնուած է Արսէն Արծրանի վկայութեան
վրայ, որոնք տուած են Արսէնի ծննդի տեղի, որ Արծրանի
ենք, ճնշումի տակ: Ան նաեւ նկատեց, որ Արծրանի կեր-
պից ցոյց տուաւ, որ Հ. Մարգարեան յանցանքի որեւէ
բեւեռի չունի գործին մէջ արձանագրուած սպանու-
թեան մէջ:


Ինչ կը վերաբերի կեղծ փաստաթուղթերուն, Ռ. Սա-
հակեան յայտնեց, որ Հ. Մարգարեան միայն մէկ առի-
թով կեղծ փաստաթուղթ գործածած է, այդ ալ՝ Հարա-
բաղի մէջ. ՕԱՄՆ-ի օրերուն: Ան յիշեցուց, որ հար-
ցաքննութիւններուն եւ քննութիւններուն ընթացքին,
տեղի ունեցած են բազմաթիւ օրինախախտումներ: Ան
պահանջեց քրեական գործ յարուցել կարգ մը քննիչ-
ներուն մասին, իսկ իր պաշտպանեալը հռչակել ան-
մեղ:

ԳՐԵՅԷ՛Ք

Գէորգ Մարաշեանին, Յովիկ
Նուպարեանին
եւ Բաֆֆի Թիթիգեանին

Հասց. c/o Etablissement Archambault
242 Montee Gagnon
St. Anne Des Plaines
QUEBEC, JON 1HO - CANADA

